Social Security

Սոցիալական Ապահովության Համարներ Երեխաների Համար

www.socialsecurity.gov

Սոցիալական Ապահովության Համարներ Երեխաների Համար

Երեխայ ունենալուց հետո կարեւոր է նրա համար Սոցիալական Ապահովության համար ստանալը: Կարող եք դիմել հիւանդանոցում երբ երեխայի ծննդյան վկայականի համար տեղեկություններ հայթայթում եք: Եթէ սպասեք, կարող եք դիմել որեւէ Սոցիալական Ապահովության բասենյակում: Սակայն ուշացումներու առաջ կը գտնվեք որովհետեւ մենք պետք է երեխայի ծննդյան վկայագիրը ստուգենք:

Ինչո՞ւ պետք է իմ երեխայի համար սոցիալական ապահովության համար ձեռք բերեմ:

Ձեզ պետք է սոցիալական ապահովության համար, որպեսզի հարկային հայտարարագրում Ձեր երեխային ներկայացնեք որպես խնամարկյալ: Ձեր երեխային նաև անհրաժեշտ կլինի սոցիալական ապահովության համար, եթե մտադիր եք.

- Հաշիւ բանալ դրամատան մէջ.
- Գնել խնայողական պարտատոմսեր (savings bonds).
- Գնել բժշկական ապահովագրություն.
- Դիմել երեխային տրամադրվող կառավարական օգնությունների:

Արդյո՞ք իմ երեխան պարտավոր է ունենալ Սոցիալական Ապահովության համար

Ո՛չ: Ձեր նորածինի համար Սոցիալական Ապահովության համար ստանալը կամավոր է: Սակայն ձեր երեխայի ծնունդից անմիջապես ետք համար ստանալու դիմում ընելը շատ լավ գաղափար է: Դուք կարող եք քարտի դիմումը ներկայացնել նոյն ժամանակ երբ երեխայի ծննդյան վկայականը ստանալու պահանջը ներկայացնեք: Ծննդյան վկայական տվող պետական գործակալությունը ձեր երեխայի տեղեկությունը կտրամադրի մեզ եւ մենք ձեզ կուղարկենք Սոցիալական Ապահովության քարտը:

Կարող եք նաեւ սպասել, եւ հետո դիմել Սոցիալական Ապահովության քարտի: Սակայն այդ ժամանակ ձեզ անհրաժեշտ կլինի ներկայացնել ձեր երեխայի տարիքը, ինքնությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներու քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր, ինչպէս նաեւ ձեր անձնական ինքնությունը հաստատող փաստաթղթեր: Մենք պետք է ստուգենք ձեր երեխայի ծննդյան վկայագրի տեղեկությունը: Այս կարող է ուշացնել քարտի ուղարկումը 12 շաբաթով: Ծննդյան վկայականը ստուգելու նպատակով Սոցիալական Ապահովությունը կապվելու է այդ վկայականը պարենաւորած կազմակերպության հետ:Մենք կատարում ենք այս ստուգումը, որպեսզի կանխենք մարդկանց փորձերը ստեղծելու նորանոր ինքնություններ ստանալով

տարբեր Սոցիալական Ապահովության համարներ կեղծ ծննդյան վկայականների օգտագործությամբ:

Ես ինչպես եմ դիմում

Հիվանդանոցում. Ձեր երեխայի ծննդյան վկայականի համար տեղեկություն տալուց, ձեզ հարց է տրվում թէ արդյոք դուք ցանկանում եք դիմել ու ստանալ երեխայի Սոցիալական Ապահովության համարը: Եթէ «այո» պատասխանեք, դուք պետք է տրամադրեք երկու ծնողների Սոցիալական Ապահովության համարները: Նոյնիսկ եթէ չգիտեք երկու ծնողների Սոցիալական Ապահովության համարները, կարող եք ներկայացնել ձեր երեխայի համար ստանալու դիմումնագիրը:

Սոցիալական Ապահովության Գրասենյակում. Եթէ սպասեք դիմելու ձեր երեխայի համարի, ապա դուք պետք է.

- Լրացնեք *Սոցիալական Ապահովության քարտ ստանալու դիմումնագիր* ը (Ձեւաթուղթ SS-5-AM) եւ
- Ցույց տաք մեզ բնագիր փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր երեխայի.
  — ԱՄՆ քաղաքացիությունը.
  — Տարիքը եւ
  — Ինքնությունը:
- Ներկայացնեք ձեր ինքնությունը հաստատող փաստաթղթեր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. *Որոշ շրջաններում փոստային ծառայությունը չի առաքի Ձեր երեխայի քարտը, եթե նրա անունը նշված չէ Ձեր փոստարկղի վրա:*

12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի երեխաներ. 12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի որևէ անձ, ով դիմել է՝ ստանալու սոցիալական ապահովության համար, պետք է ներկայանա սոցիալական ապահովության գրասենյակ՝ հարցազրույցի, անգամ այն դեպքում, եթե նրա դիմումն իր փոխարեն ստորագրել է ծնողը կամ խնամակալը:

Քաղաքացիությունը

Որպես ԱՄՆ քաղաքացիության վկայություն մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Դրանց շարքում են ԱՄՆ ծծնդյան վկայականը, ԱՄՆ հյուպատոսական ծառայության կողմից ծնունդի արձանագրությունը, ԱՄՆ անցագիրը, Հպատակագրման կամՔաղաքացիության վկայականը: Յաւելյալ տեղեկության համար ոչ քաղաքացիները պետք է կարդան *Սոցիալական ապահովության համարներ՝ ոչ-քաղաքացիների համար* (Հրատարակության համար 05-10096-AM):

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք ձեր երեխայի ծննդյան վկայականը՝ (Եթե առկա է, ապա դուք պետք է այն ներկայացնել.) Եթե դուք չեք ունենա ծննդյան վկայական, մենք կարող է ընդունել

- Ձեր ծննդյան մասին ԱՄՆ հիվանդանոցի գրանցումը (կազմված Ձեր ծննդյան ժամանակ)
- Կրոնական գրանցումը, որը կատարվել է մինչև հինգ տարեկանը, նշելով Ձեր տարիքը և ծննդյան ամսաթիվը

- անձնագիր Անձնագիը
- ԱՄՆ ներգաղթի փաստաթղթեր

Ինքնության հաստատում

Ձեր երեխան. Որպես ձեր երեխայի ինքնության հաստատում մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր երեխայի անունը, ազգանունը եւ ինքնությունը հաստատող տեղեկություն: Ցանկալի է որ այն ունենա վերջերս հանված լուսանկար մը: Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք ընդունել ինքնությունը հաստատող առանց լուսանկարի փաստաթուղթ, եթէայն պարունակում է երեխայի ինքնությունը հաստատող բավարար տեղեկություն (օրինակ, երեխայի անունն ու տարիքը, ծննդյան ամիսը, ամսաթիվը եւ տարեթիվը կամ ծնողների անունները): Մենք նախընտրում ենք տեսնել երեխայի ԱՄՆ անցագիրը: Եթէ այդ փաստաթուղթը մատչելի չէ, մենք կարող ենք ընդունել երեխայի.

- Որդեգրման հրամանագիրը.
- Բժիշկի, դարմանատան կամ հիվանդանոցի գրանցումը.
- Կրոնական գրանցումը (օրինակ, կնունքի գրանցումը).
- Մանկավարժական խնամքի կենտրոնի կամ դպրոցի գրանցումը կամ
- Աշակերտի անձի նույնականացման քարտ: (Ձեր երեխայից կարող է պահանջվել ներկա գտնվել, եթե ներկայացվել է անձը հաստատող այնպիսի վկայական, որն ունի

(շրջել)

լուսանկար, օրինակ՝ աշակերտի անձի նույնականացման քարտ:)

Դուք. Եթէ դուք ԱՄՆ քաղաքացի եք, Սոցիալական Ապահովության Վարչությունը պահանջում է ձեր ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ վարորդական քարտը կամ ԱՄՆ անցագիրը իբր ինքնության փաստաթուղթ: Եթէ դուք չունեք մեր պահանջած որոշակի փաստաթղթերը, կարող եք ներկայացնել այլ փաստաթղթեր, ներառյալ.

- Գործատիրոջ կողմից տրված ինքնությունը հաստատող աշխատանքային քարտ.
- Դպրոցի կողմից տրված ինքնությունը հաստատող ուսանողական քարտ.
- Առողջության ապահովագրության քարտ (ոչ Մէտիքէրի քարտը).
- ԱՄՆ զինվորական ինքնության քարտ, կամ.
- կյանքի ապահովագրության քաղաքականությունը:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք ձեր երեխայի անցագիրը օգտագործել որպես քաղաքացիության եւ ինքնության ապացույց: Կամ, կարող ենք ձեր երեխայի ծննդյան վկայականը օգտագործել որպես ապացույց տարիքի եւ քաղաքացիության: **Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:**

Մենք կ՛ուղարկենք ձեր Սոցիալական Ապահովագրության համարն ու քարտը անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց եւ փաստաթղթերը ստուգելուց ետք:

Իսկ ինչ եթէիմ երեխան որդեգրված է

Կարող եք Սոցիալական Ապահովության համար ստանալ ձեր որդեգրած երեխայինհամար նախքան որդեգրումի ավարտումը: Սակայն նախընտրելի է սպասել մինչեւ որդեգրումի ավարտը: Այն ժամանակ կարող եք օգտագործել երեխայի նոր անունը, ազգանունը եւ իբր ծնող նշել ձեր անունն ու ազգանունը երեխայի դիմումնագրի վրայ: Եթէ ցանկանում եք ձեր երեխան ընդգրկել ձեր տարեկան եկամուտի հայտարարագրման մէջ որդեգրման ընթացքում, դուք պետք է Ներքին Հարկային Վարչությունից (IRS) պահանջեք Թուղթ W-7A: Այս ձեւաթուղթը կոչվում է *Application for Taxpayer Identification Number for Pending U.S. Adoptions* (*ԱմերիկայիՄիացյալ Նահանգների Որդեգրության Ընթացքում Հարկ Վճարողի Ինքնության Համար Ստանալու Դիմումնագիր*):

Որքա՞ն է ծախսը

Սոցիալական Ապահովության համար ու քարտ ստանալը անվճար է: Մերժեցեք օգնություն որեւէ մի անհատից որ ձեզնից փող է ուզում գանձել Սոցիալական Ապահովության համարի կամ Սոցիալական Ապահովության որեւէ ուրիշ ծառայությունների համար: Հիշեցեք որ Սոցիալական Ապահովության ծառայությունները անվճար են: Դուք կարող եք զանգահարել Ընդհանուր Քննիչի Գրասենյակը (Office of the Inspector General) հետեւյալ անվճար համարով **1-800-269-0271** եւ տեղյակ պահել մեզ այդ անձերու մասին:

Իսկ ինչ եթէ ես կորցնեմ քարտը

Դուք կարող եք անվճար փոխարինել ձեր քարտը կամ ձեր երախայի քարտը, եթե այն կորցրելլ եք կամ գողացել են: Սակայն, մէկ տարվա ընթացքում երեք անգամից աւելի չեք կարող փոխարինել, իսկ ձեր կյանքի ընթացքում 10 քարտից աւել չեք կարող ստանալ: Անունիօրինական փոփոխություններն ու այլ բացառություններ հաշվի չեն առնվում: Օրինակ, ոչ քաղաքացու կարգավիճակի փոփոխությունները, որոնք պահանջում են քարտի նորոքում, հաշվի չեն առնվում: Եթէ ապացուցեք որ քարտը ձեզ անհրաժեշտ է լուրջ դժվարություն կանխելու համար, դարձեալ կարող եք սահմանափակ քարտերից աւելի ստանալ:

Կարեւոր է ձեր երեխայի Սոցիալական Ապահովության քարտը պահեք ապահով տեղում որովհետեւ այդ կարեւոր փաստաթուղթ է: **Մի կրեք այն ձեզ հետ:**

Սոցիալական Ապահովության քարտի սխալ օգտագործումը

Եթե դուք կարծում եք թէ մի անձ անօրէն կերպով օգտվում է ձեր երեխայի Սոցիալական Ապահովության համարից, դուք պետք է գանգատ ներկայացնեք Դաշնակցային Առեւտրային Հանձնաժողովին (Federal Trade Commission),

- Համացանցով՝ ***www.idtheft.gov***
- Հեռախոսով՝ **1-877-IDTHEFT (1-877-438-4338)** կամ TTY համարով՝ **1-866-653-4261**:

  Օրէնքի դեմ է.
- Օգտագործել ուրիշի պատկանող Սոցիալական Ապահովության քարտն ու համարը.
- Կեղծ տեղեկություն տալ համար ստանալու նպատակով կամ

- Փոխել, գնել եւ կամ վաճառել Սոցիալական Ապահովության քարտը:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10023-AM
Social Security Numbers For Children (Armenian)
September 2012